

գերազանցեալ քան զիշխանագուն հօրեղբորորդիսն, մինչեւ բնական իմն մակդիր անուն ընծայել նմա **Մեծաբարոյ**. կոչեալ է եւ *Օօն*, որ ոչ գիտեմ զինչ նշանակէ: Որպէս համշիրակ իւր Ս. Լամբրունեցին՝ քաղաքամօր աշխարհին Կիլիկիոյ (Տարսոնի) եկաց դիտապետ, եւ սա նորոյ մայրաքաղաքին Ստոյ՝ յարքեպիսկոպոսութիւն, եւ յառաջնորդութիւն Դրագարկու, եւ ՚ի ժամանակի թագընկալութեանն Լեւոնի՝ միայն երկոցուն արքեպիսկոպոսացն Սասայն եւ Կապանի՝ ստորեւ կարգեալ էր, թերեւս զի նոքա յառաջ քան զբարձրանալ Ստոյ ՚ի պատիւ՝ ընտրեալ էին յայն մեծավիճակ աթոռս. բայց աթոռակալն Յովհաննէս՝ եւ ոգւոյն մեծութեամբ եւ մտացն հարստութեամբ՝ գերազանցէր զյոգումբք, եւ թերեւս յետ անհաւասարելոյն Ներսիսի՝ նա էր առաջին հանճար յուխտի եկեղեցւոյն, միանգամայն եւ գործօն եւ մեծագործ այր. վասն որոյ եւ կարգեցաւ ՚ի Լեւոնէ քարտուղար կամ ատենադպիր պետութեան իւրոյ, որպէս թուի եւ վասն հմտութեանն լեզուաց եւ մակացութեանց, որ առանձինն իմն ձիր էր Հեթմեան տոհմի. այլ եւ դատաւոր խնդրոց եւ վիճից եկացն արեւմտեայց՝ բնակելոց կամ վաճառակցելոց ՚ի Սիս եւ յայլ քաղաքս: Տեսաք զնա զիա՛րդ խորագիտութեամբ եւ զինուորական իմն ճարտարութեամբ երթեալ ՚ի Հռոմկլայն՝ կալաւ զմանուկ կաթողիկոսն Գրիգոր (1195) եւ եբեր առ Լեւոն.՝ եւ ո՛րպէս ՚ի գալ Ե Խաչակրաց եւ նուիրակի կայսերն եւ Քահանայապետին Հռովմայ՝ ՚ի Պտղոմայիս, դեսպանութեամբ առաքեցաւ առ նոսա ՚ի Լեւոնէ՝ յողջոյն, եւ ՚ի խնդիր թագին. եւ յետ օծման սորա՝ ՚ի գրելն ընդ կաթողիկոսին թուղթ շնորհակալութեան ՚ի Հռոմ, գրեաց եւ ինքն Յովհաննէս, խնդրելով միթր եւ մատանի, իբրու ջատագով միաբանութեան եկեղեցւոյ եւ յորդորիչ խաչակիր զինուորութեան, եւ ընկալաւ զոր խնդրէին ՚ի Սրբազանէն. առ որ դարձեալ գրէր՝ այն ինչ ընտրեալ ՚ի կաթողիկոսութիւն՝ բազում ճարտարութեամբ եւ մեծանձնութեամբ, յորժամ ՚ի սաստկանալ անտիրոջեան հակառակութեանց, ՚ի տատամսել Պետրոսի նուիրակի եւ ՚ի պնդանալ Լեւոնի, ժողովն Անտիոքայ ընդ բանիւ առնել զսա փութացաւ. յայնմ թղթի Յովհաննէս՝ ընդ զանգատանսն՝ զոյգ բանից թագաւորին, զի առանց հարցանելոյ զուխտ եկեղեցւոյ իւրոյ՝ այնպէս վճռեցին, յիշեցուցանէր եւ զվաստակ իւր ՚ի հաւանեցուցանել զիւրսն՝ ՚ի պայմանս նուիրակաց Քահանայապետին, յորոց է ինչ զի յանձն առին առ ժամայն, եւ է զի թողին քննել յատեան սիննհողոսին իւրեանց, զոր խոստանայր զումարել ՚ի դէպ